ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանի՝
2019թ. դեկտեմբերի 16-ից 21-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ
(ք. Լոս Անջելես) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը.**

   Արմեն Հարությունյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Լոս Անջելես), 2019 թվականի դեկտեմբերի 16-ից 21-ը

4. **Հրավիրող կողմը.**

   ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության տնօրեն Արամ Սահակյան

5. **Գործուղման նպատակը.**

   Փորձի փոխանակման նպատակով ճանաչողական այց

6. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվեցին հետևյալ թեմաները՝

- ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության (EMD), Լոս Անջելես քաղաքի ոստիկանության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջև համագործակցության հնարավորություն:
- Համագործակցության հնարավորություն Երևանի և Լոս Անջելեսի միջև՝ քույր քաղաքներ համատեքստում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում նորարարական մեթոդներին ծանոթանալու և տեխնիկական աջակցություն ստանալու և ցուցաբերելու նպատակով համագործակցային նոր կապերի ստեղծման և ընդլայնման հնարավորություն:

- Ծանոթացում Լոս Անջելես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության 911 ծառայության և Լոս Անջելես քաղաքի ոստիկանության 911 ծառայության կողմից իրականացվող աշխատանքներին:
- Այցելություն կիբերանվտանգության ապահովման կենտրոն:
- EMD կողմից ներկայացվեցին բարձրահարկ շենքերի ինքնահրդեհաշիջման և հիդրանտների տեղադրման առանձնահատկությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները՝

- ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության (EMD) տնօրեն Արամ Սահակյանի հետ,
- Լոս Անջելես քաղաքի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Կրեկորյանի հետ,
- Լոս Անջելես քաղաքի ոստիկանության ներկայացուցիչ Վարդան Եղիկյան հետ,
- EMD պլանավորման բաժնի պետ Լարրի Մեյերհոֆերի հետ,
- EMD ուսուցման և վարժանքի բաժնի պետ Գերի Սինգերի հետ,
- EMD կառավարման և ֆինանսների բաժնի պետ Էլլեն Լինաաքի հետ,
- EMD հանրության պատրաստվածության և ներգրավածության բաժնի պետ Քարոլ Փարկսի հետ,
- EMD գործառնական պատրաստվածության բաժնի պետ Քրիս Իփսենի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց 2020թ. կազմակերպել Լոս Անջելես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության և Լոս Անջելես քաղաքի ոստիկանության ղեկավար կազմի պատվիրակության այցը Հայաստան, որը հնարավորության դեպքում կգլխավորի Լոս Անջելեսի քաղաքապետը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև ամերիկյան կողմին ներկայացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը և ՀՀ ոստիկանությանն անհրաժեշտ գույքի և մասնագիտական տեխնիկայի համատեղ ցանկ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Լավագույն փորձի փոխանակման նպատակով որոշվեց կազմակերպել ԱԻՆ փրկարար ծառայության և Լոս Անջելես քաղաքի արտակարգ իրավիճակների կառավարման վարչության աշխատակիցների վերապատրաստումներ և փոխադարձ այցելություններ Հայաստան և ԱՄՆ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

24.12.2019թ.